ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
Հ. Սահյանի անվան հ. 70 դպրոց
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևան Սարի թաղ 3 փող.44 շենք 70-dproc@rambler.ru հեռ 55-75-78

N-70

‹‹05›› Սեպտեմբերի 2022թ.

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՊԱՐՈՆ ԳԱԳԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաֆարյան.

Երևանի Համո Սահյանի անվան հ.70 հիմնական դպրոցում առաջացել է ֆիզիկա(7 դասաժամ),ինֆորմատիկա (4 դասաժամ), հայոց եկեղեցու պատմություն(5 դասաժամ) առարկաների ուսուցչի թափուր տեղեր, որոնց համար հայտարարվում է ուսուցիչների թափուր տեղերի մրցույթ:

Խնդրում ենք հաստատության ուսուցչի թափուր տեղերի մրցույթի մասին հայտարարությունը 06.09.2022թ.-ին տեղադրել www.edu.am պաշտոնական կայքում:

Կից ներկայացնում ենք մրցույթի հայտարարությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
Մուտք N՝ – 54463-2022
«05» 09 2022

Մրցույթ՝ «Երևանի Հ. Սահյանի անվան հ.70 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկա (7 դասաժամ), ինֆորմատիկա (4 դասաժամ), Հայոց եկեղեցու պատմություն (5 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 6-ից մինչև սեպտեմբերի 19-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 16:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022 թ. սեպտեմբերի 23-ին՝ ժամը 14:00-ին**, Հ. Սահյանի անվան հ.70 հիմնական դպրոցում, հասցե՝Սարի թաղ 3փ, 44շ : Տեղեկությունների համար զանգահարել -010557578 հեռախոսահամարով: